ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

01. 02.2020 թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան
Խորհրդի նիստին մասնակցում էին 16 անդամից 12-ը:
Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. 2019-2020 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում / Զեկ. Գ. Ավետիսյան/:
2. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի մասնաճյուղային անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում /Զեկ Գ. Ավետիսյան/:

1. Լսեցին.- 2019 -2020 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի տնտեսագիտության ֆակուլտետի առաջադիմությունը: Մասնավորապես նա նշեց, որ տնտեսագիտության ֆակուլտետում 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 108 ուսանող: «Ֆինանսներ», «Տնտեսագիտություն» կրթական ծրագրերով 65 ուսանող, «Զբոսաշրջություն» և «Սերվիս» կրթական ծրագրերով 43 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել է 87 ուսանող (նախորդ ուստարում նույն կիսամյակում՝ 63): Գերազանց գնահատականներ ստացել են 11 ուսանող,(նախորդ ուստարում նույն կիսամյակում՝ 2): Ֆակուլտետում բացարձակ

առաջադիմությունը կազմել է 80,6 %, (նախորդ ուստարում նույն կիսամյակում՝ 62,4%):

Միաժամանակ նա նշեց, որ անվճար ուսուցման համակարգով սովորում է 36 ուսանող, որոնց բացարձակ առաջադիմությունը կազմում է 97,2%: Ֆակուլտետի 11 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ, իսկ անբավարար՝ «Ֆինանսներ» առաջին կուրսից 1 ուսանող:

Վճարովի ուսուցման համակարգում սովորում են 72 ուսանող, բացարձակ առաջադիմությունը կազմում է 72,2%: Լավ և գերազանց գնահատականներ ստացել է 8 ուսանող:

Գ. Ավետիսյանը նշեց, որ անբավարար ստացողների թիվը համեմատ նախորդ տարվա նվազել է, սակայն անբավարար ստացողների ինչպես նախորդ տարի, այնպես էլ այս տարի «Տնտեսագիտություն» և «Ֆինանսներ» մասնագիտություններով երրորդ և չորրորդ կուրսերում է գերակշռում /տնտ. IV-ում՝ 8, ֆին. III՝ 5/: Իսկ «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ սովորողների մոտ պատկերը հակառակն է, այստեղ անբավարար ստացողները առաջին կուրսի ուսանողներն են:

Գ. Ավետիյանը նշեց, որ ուսանողների առաջարկությամբ ֆակուլտետում նախատեսվում է «Էկոնոմետրիկա-2» դասընթացի շրջանակում ֆակուլտատիվ պարապմունքներ:

Արտահայտվեցին.-Գ. Հովհաննիսյանը

Նա նշեց, որ այդ ֆակուլտատիվ դասընթացներ իրականացնելը գովելի է, քանի որ այն նախատեսված է ստացված գիտելիքների ամրապնդմանը, ինչպես նաև բացը լրացնելուն:

Որոշեցին.- 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին.- 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի մասնաճյուղային անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկման մասին /Զեկ Գ. Ավետիսյան/:

Դեկանը ներկայացրեց մասնաճյուղում գործող անվանական կրթաթոշակների հատկացման կարգն ու պայմանները: Նա նշեց, որ այն տրվում է առավել աչքի ընկած, լավ և գերազանց առաջադիմություն և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողին, որպես ֆինանսական խրախուսանք: Ըստ մասնաճյուղում գործող կարգի՝ անվանական կրթաթոշակի հավակնորդին առաջադրված պահանջները բավարարում են մի քանի ուսանողներ: «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց ֆակուլտետի «Զբոսաշրջություն» մասնագիտության II կուրսի ուսանողուհի Ենգիբարյան Իննան՝երեք կիսամյակ անընդմեջ գերացանց առաջադիմություն ցուցաբերած: «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց «Ֆինանսներ» մասնագիտության III կուրսի ուսանողուհի, երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ապահովված, Լուիզա Մադաթյանը: «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած, ֆակուլտետի ՈՒԳ-ի նախագահ, «Տնտեսագիտություն» մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Տիգրանուհի Թիրաբյանը: «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակի է ներկայացվել «Զբոսաշրջություն» մասնագիտության II կուրսի ուսանողուհի Ուլիխանյան Լաուրան:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը:

Արտահայտվողները նշեցին, անվանական կրթաթոշակի ներկայացված վերոհիշյալ ուսանողները արժանի են ոչ միայն ցուցաբերած ակադեմիական առաջադիմությամբ, այլ նաև հասարակական ակտիվությամբ ու օրինակելի վարքով: Նրանք անդամակցում են մասնաճյուղում գործող ուսանողական ինքնակառավարման կառույցներին:

Որոշեցին - Հավանության արժանացնել 2019-2020 ուստարվա գարնանային (երկրորդ) կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդներ Տիգրանուհի Թիրաբյանի, Լաուրա Ուլիխանյանի, Լուիզա Մաղաթյանի, Իննա Ենգիբարյանի թեկնածությունները և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Գիտխորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*
Քարտուղար՝ *Ա.Ալեքսանյան*